1 հոկտեմբերի 2020 թվականի N 1619 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 606-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ՊԱՐԿ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 606-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 11-րդ կետի «ԱՏԳԱԱ ծածկագիրը» սյունակի «9508» ծածկագիրը փոխարինել «9506» ծածկագրով.

2) 24-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «Santa Maria» բառերը փոխարինել «Santa Maria Swingboat» բառերով,

«Քանակը» սյունակի «15 500» թիվը փոխարինել «25 000» թվով,

«Արժեքը» սյունակի «247 000 000» թիվը փոխարինել «260 000 000» թվով.

3) 37-րդ կետի «Քանակը» սյունակի «16 500» թիվը փոխարինել «25 000» թվով,

«Արժեքը» սյունակի «243 500 000» թիվը փոխարինել «270 000 000» թվով.

4) հավելվածը 52-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 53-56-րդ կետերով.

53.	9405	Դրսի էլ. լուսատուներ Led լամպերով	Դրսի էլ. լուսատուներ Led լամպերով, մետաղական հիմքով 320 w	կգ	800	26 000 000
54.	9405	Պլ. էլ. լուսատուներ Led լամպերով	Պլ. էլ. լուսատուներ Led լամպերով ատրակցիոնի համար	կգ	200	7 500 000
55.	9405	Լուսատուների պլաստ. մասեր՝ փոխովի գլխիկներով	Լուսատուների պլաստ. մասեր՝ փոխովի գլխիկներով	կգ	200	1 406 000
56.	6702	Արհեստական ծառերի, ծաղիկների, թփերի տեսականի	Արհեստական ծառերի, ծաղիկների, թփերի տեսականի	կգ	7 300	155 000 000

5) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «9 044 886 000» թիվը փոխարինել «9 274 292 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ